Արձանագրություն

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի

Գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման վայրը՝ առկա, առցանց

Նիստի անցկացման օրը՝ 2024 թ. հոկտեմբերի 8

Նիստի մեկնարկի ժամը՝ 15:00

1. **Գնահատող հանձնաժողովի կազմը՝**

1) Արփինե Սարգսյան - ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),
2) Արմեն Ղազարյան - ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ,
3) Լիանա Թովմասյան - ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական,
4) Արշակ Քերոբյան - ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ,
5) Արթուր Պետրոսյան - ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետի պաշտոնակատար,
6) Անդրանիկ Նանագուլյան - ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակից,
7) Վաղինակ Բաղեյան - ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակից,
8) Ներսես Երիցյան - «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն,
9) Արման Խաչատուրյան - «ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ժամանակավոր պաշտոնակատար,
10) Սիրան Եգանյան - ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար,
11) Նելլի Դավթյան - ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար):

Գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները նիստին ներկա էին, որոնցից 10՝ առկա, իսկ 1-ը՝ հեռավար: Նիստի անցկացման համար քվորումն ապահովված էր:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կայքում. որակավորված հայտատուների 12.04.2024թ կարճ ցուցակի հրապարակումից ի վեր ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ Կառավորության 2346-Ա որոշմամբ հաստատված Գնահատող հանձնաժողովը բանակցություններ է վարել որակավորված հայտատուների հետ, ինչի արդյունքում 2346-Ա որոշմամբ հաստատված հավելվածներ N 4.1, N 4.2 և N 4.3-ը՝ Տեխնիկական պահանջները՝ համապատասխանաբար անգլերեն, հայերեն և ռուսերեն, և հավելվածներ N 2.1, N 2.2 և N 2.3-ը՝ Պայմանագրի նախագիծը՝ համապատասխանաբար անգլերեն, հայերեն և ռուսերեն, կրել են որոշակի փոփոխություններ: 2024թ հոկտեմբերի 3-ին ՀՀ Կառավարությունը N 1583-Ա որոշմամբ հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման մասին Կառավորության 2346-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծին, որով նոր խմբագրությամբ հաստատվեցին վերոնշյալ փաստաթղթերը, ինչպես նաև, որպես նոր հավելված, հաստատվեց Առաջարկի հարցման փուլի հիմնական պայմանները: Հաստատված փաստաթղթերում կատարվել են որոշ տեխնիկական շտկումներ, և վերջնականացված Առաջարկի հարցումը, Պայմանագրի նախագիծը և Տեխնիկական պահանջները ներկայացվում են Գնահատող հանձնաժողովի հաստատմանը:

2. Նիստի ընթացքը և արդյունքները՝ Գնահատող հանձնաժողովի նիստին քվեարկության դրվեց լրամշակված փաստաթղթերի հաստատման հարցը: Նիստին մասնակից բոլոր անդամները կողմ քվեարկեցին:

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման մասին Կառավորության 2346-Ա որոշան հավելված 3.2-ի 7.5.1 կետի համաձայն՝ Գնահատող հանձանժողովի կողմից հաստատված Առաջարկի հարցումը 2 աշխատանքային օրերի ընթացքում կհրապարակվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կայքում:

Արփինե Սարգսյան	ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)	(ստորագրություն)

Արմեն Ղազարյան	ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ	(ստորագրություն)
Արշակ Քերոբյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ	(ստորագրություն)
Լիանա Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական	(ստորագրություն)
Արթուր Պետրոսյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետի պաշտոնակատար	(ստորագրություն)
Անդրանիկ Նանագուլյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից	(ստորագրություն)
Վաղինակ Բաղեյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից	

(ստորագրություն)

Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն	(ստորագրություն)
Արման Խաչատուրյան	«ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար	(ստորագրություն)
Սիրան Եգանյան	ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար	(ստորագրություն)
Նելլի Դավթյան	ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)	(ստորագրություն)